Հաշվետվություն
2018 թվականի նոյեմբերի 26-27-ը ք. Մինսկ (Բելառուսի Հանրապետություն)
գործուղման արդյունքների մասին

1. ***Անունը, Ազգանունը***

Արարատ Միրզոյան

2. ***Զբաղեցրած պաշտոնը***

ՀՀ առաջին փոխվարչապետի պաշտոնակատար

3. ***Գործուղման վայրը և ժամկետները***

Մինսկ (Բելառուսի Հանրապետություն) 2018թ. նոյեմբերի 26-27-ը

4. ***Գործուղման նպատակը (աշխատանքային, որ խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը)***

Մասնակցություն Եվրասիական միջկառավարական խորհրդի նիստին:

5. ***Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը***

Առաջին փոխվարչապետի պաշտոնակատար Արարատ Միրզոյանի գլխավորած պատվիրակությունը մասնակցել է Եվրասիական միջկառավարական խորհրդի հերթական նիստին: Մինչ նիստը տեղի է ունեցել ԵԱՏՄ անդամ պետությունների կառավարությունների ղեկավարների հանդիպումը Բելառուսի Հանրապետության Նախագահ Ալեքսանդր Լուկաշենկոյի հետ, որի ընթացքում զրուցակիցները մտքեր են փոխանակել ինչպես երկկողմ, այնպես էլ միջազգային կազմակերպությունների և ինտեգրացիոն միավորումների շրջանակներում անդամ պետությունների միջև համագործակցության արդիական հարցերի շուրջ:

Այնուհետև կայացել է ԵԱՏՄ անդամ պետությունների կառավարությունների ղեկավարների նեղ կազմով նիստը, որին հաջորդել է ընդլայնված կազմով նիստը: Քննարկվել են օրակարգային հարցեր, որոնք վերաբերում էին ԵԱՏՄ թվային օրակարգին, տրանսպորտային, մաքսային, հարկային համագործակցությանը, գազի ընդհանուր շուկայի ձևավորմանը և այլն:

6. Հանդիպման ժամանակ ընդունված որոշումները, ստորագրված փաստաթղթերը

Օրակարգային մի շարք հարցերի շուրջ ստորագրվել են փաստաթղթեր:

Առաջին փոխվարչապետի պաշտոնակատարը հանդես է եկել ելույթով: Նա վերահաստատել է, որ Հայաստանը հանձնառու է և շարունակելու է հետևողական քայլեր ձեռնարկել ԵԱՏՄ շրջանակներում ինտեգրացիոն գործընթացների խորացման, այդ թվում՝ ապրանքների, ծառայությունների, աշխատուժի և կապիտալի ազատ տեղաշարժի համար պայմանների ստեղծման ուղղությամբ:

Միաժամանակ նա նշել է, որ 2019թ. Հայաստանը ստանձնում է նախագահությունը ԵԱՏՄ-ում և պատրաստակամություն հայտնել Եվրասիական միջկառավարական խորհրդի նիստերից մեկը հյուրընկալել Հայաստանի Հանրապետությունում, 2019թ. ամռանը:

<u>Գործուղվող</u>՝

Առաջին փոխվարչապետի պաշտոնակատար Ա.Միրզոյան

<u>Ստորագրություն, ամսաթիվ</u>

29.11.2018թ.